

անոնց երկուքն ալ շունին ինչ ըլլալը աղէկ մըն ալ չեն դիտեր : Դադափարաց այս անպատշաճ կապակցութեամբն է որ սենեկի մը մասնաւոր մէկ անկիւնը , կամ մորթի մը՝ կտոր , կամ ծռմոկած ծխափայտ մը՝ ատենէ մը ետքը պատկառելի իր մը կ'ըլլայ . վասն զի մէկուն ծեր հայրը՝ չմեռած , այն ծխափայտը կը գործածէ եղեր . կամ իր մամը այն անկիւնը կամ այն մորթին կտորին վը- րայ կը նստի եղեր : Ուրիշ տան մը մէջ ալ գեղեցիկ աթոռին մէկը՝ երկար ատեն պիտանի կարասի մը ըլլալէն ետքը , յանկարծ իր յատկութիւնը կը փոխէ , ատելի բան մը կ'ըլլայ . վասն զի մէկուն սիրական եղբայրը՝ մեռնելէն երկու շաբաթ առաջ , վրայէն վար ընկեր՝ թեր ցացուցեր է , և այն : Այս օրինակներուն թիւը չկայ :

Ուրդիկ որովհետև՝ ի բնէ տկար են , շատ կը սխալին , անոնց ամէն ստանալիք ծանօթութիւններնուն վրայ զգոյշ կե- նալը անհնար ըլլալուն , տղայոց առաջ- նորդ եղողները՝ շատ պատուաւոր կեր- պով մը պարտքերնին լեցուցած կ'ըլլան՝ թէ որ աշխատին որ գոնէ տղայք ծուռ գաղափարներ ըստանան ,

Ա . Այս նիւթերուն վրայօք՝ որ կեանքերնուն մէջ յաձախ իրենց պիտի պատահի .

Բ . Այս պաշտօններուն վրայօք , որ ետքը իրենք պիտի վարեն . կամ այն պարտքերուն վրայօք՝ որոնց կատարու- մը ետքը իրենցմէ պիտի պահանջուի :

Ուկատ ամէն կերպ նախապաշար- մունք ձխմարտութեան զարգացմանը արգելք կ'ըլլան , բայց անոնց մէջ տը- ղայոց դաստիարակութեանը վրայօք ե- ղածները՝ մեզի ամենէն աւելի մնասա- կարները ըլլալուն , ուրիշ ատեն քիչ մըն ալ անոնց վրայ կը խօսիմ :

1. Փեսուէի :

10 Կոյեմբեր 1848
Տ ՊՈՍՏԱՆԴԱՌՈՒՅ

Ն . Մ . ԶՈՐԱՅԵՎ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՅԱՀԱՏԱԿԱՐԱՆՔ ՀԱՑՈՑ



Դ .

Ուագ Տրդապայ :

ՁՈՒՐ ԱՐՏԱՍՈՒԱՑ ԱՉԱՑ ՈՎ ՏԱՑ
ՈՂԲԱԼ ԸԶԹԱԳՄԱՆ ԱՑՍ ՏՐԴԱՏԱՑ

Այսուհետեւ կամ յիշատակարաններ՝ որոնց վրայ չիկրնար մարդ անտարբեր կեր- պով մը նայիլ , որոնց առջեւ չիկրնար սիրտ մը խաղաղ մնալ , մանաւանդ հայ- րենասիրի մը աչք չիկրնար առանց ցո- ղելու տեմնել այն յիշատակարանը՝ որ իր հայրենեաց մեծագոյն փառքը կը ներկայացընէ հանդերձ մեծագոյն խեղ- ձութեամբ մը : Ո՞ր հայեցի սիրտ կրնայ այն մեծ Տրդատայ գլխին պսակը տես- նել , և մէկէն միտքը չթոցընել նախ այն դաշտերուն մէջ՝ ուր որ այն դիւ- ցանման և սրբազն հսկայն ամէն քա- ջերէ վեր քաջ հանդիսացաւ , վերջը այն երկնաւոր գաւառն՝ ուր որ Այսու- ծոյ հետ կը թագաւորէ . բայց ո՞ր ըզ- գայուն սիրտ կրնայ արգիլել աշուրնե- րը որ չթափէ աղի արցունք մը այն վսե- մական և տիեզերակալ թագին վրայ՝ որն որ ստիպուեցաւ Տրդատ իր ազգին մեծերուն խստարտութեամնը և մոլու- թեանցը համար՝ ձգելու քաշուիլլեռ- ներու մէջ . “ Ինկեցեալ զերկրաւոր „ պսակս՝ զհետ ընթանայր երկնաւո- „ որին . . ծակամնւտ լեռնակեցիկ ե- „ ղեալ՝ „ . այն թագին վրայ , որ կրկին անգամ յանձն առաւ Տրդատ գլուխը գնել՝ խորամանկ նախարարաց աղաչանքովը , բայց անոնք առջինէն ա- ւելի չարութեամբ՝ զլխէն ձգեցին , թիւ- նով կարձեցընելով այն կեանքը , որ աւելի կ'աժէր երկրաւոր անմահութիւն ըսել քան թէ կեանք . այն մեծափառ թագին վրայ՝ որուն հպատակ կային

1. Խոր . Բ . զը :



2. επικούρειον ιερόν

շատ թագեր հիւսիսային և արևմտեան
Շխիոյ կողմերը , և այնչափ միլիոն ժո-
ղովուրդք՝ որչափ թերես հիմայ Խոր-
պայի մէջ Ոտուսէն զատ թագ մը՝ չունի
չպատակ :

Դիմացի հայկական յիշատակարա-
նաց տախտակիս Զ թիւը կը ներկայա-
ցնէ մեզի այս թագը , ինչպէս որ կը
կարծուի . ասոր վրայ շատ տեղեկու-
թիւն չունինք , բայց կը յուսանք թէ
այս պատկերէն և այս գրուածքէն շար-
ժելով՝ աւանդութեամբ բան մը գիտ-
ցողները յայտնեն բարեսէր ինդրողաց .
որովհետեւ ազգերնուու մէջ ասանկ թա-
գի մը ձայն տեղ տեղ լսուեր է . ինչ-
պէս մենք ալ լսեցինք , չեմ գիտեր իրաւ-
թէ սուտ և որչափ սուտ , թէ Ոտու-
ները Խրեան առնելէն ետեւ՝ Վ ջմիած-
նայ գանձերուն մէջ կը գտնեն Տիգրա-
նայ թագն ծանրագին գոհարներով
զարդարուած և կը վերցընեն . կա-
թուղիկոսին շատ աղաւելով՝ կայսրը
նորէն ետ դարձընել կուտայ թագը ,
բայց վրայէն շատ քար պակսած կը
դառնայ :

Խակ մեր տուած պատկերը առնուած
է Ապահան տպուած գրքի մը մէջէն .
մենք գիրքն ալ տեսած չենք , միայն այս
պատկերը անկէ օրինակեր էր հանգու-
ցեալ Ապահակ վարդապետն Ա աղաքեան
և մեզի տուեր , թագին տակն ալ գր-
րուած է եղեր պատկերին մէջ այն եր-
կու տող սրտառուչ ոտանաւորը : Ա յս
տեղեկութիւնը ունենալով հետաքնին
բանասէրք մանաւանդ հայրենասէրք՝
կը նանան ետեւէ իյնալ և քննել՝ Որ Պ ու-
ղայի վանքին մէջ կամ ուրիշ մօտ տե-
զուանք թէ կայ այդակիսի գիրք :

Ա Եր պատմչաց մէջ Տրդատայ թա-
գին վրայ մասնաւոր յիշատակ մը չկայ ,
բայց անկէ շատ հեռու չէ յիշատակ մը
կայ հետաքննութեան արժանի . վասն
զի Խոսրովայ՝ Տրդատայ հօրը թագն
է յիշուածը . այս քաջ թագաւորը Ա ա-
սանեանց մատնութեամբ մեռնելէն վեր-
ջը՝ հաւատարիմն () տա անոր աղջկա-
նը Խոսրովիդիստին հետ՝ առաւ բոլոր
Հայոց թագաւորական զարդերն և ին-

չուան կառքերն ալ , ու Ինի ամուր բեր-
դին մէջ պահեց , ինչուան որ եկաւ
յաղթողն Տրդատ ու թագաւորեց .
հաւանական է որ թագաւորական գան-
ձուց հետ էր ամենէն ցանկալին ալ ,
թագն ալ . կրնայ ըլլալ որ այն թագը
Տրդատ ալ գործածած ըլլայ ատեն մը ,
կամ ըլլայ . հաւանականն է որ պահած
ըլլայ իր գանձուցը մէջ . և անկէ իր
յաջորդներուն ալ անցած , և թերես
Բագրատունեաց ալ , իբրեւ գանձ և յի-
շատակ և ոչ գործածելի . Հայոց թա-
գաւորներէն ալ անցած կ'երեւի՝ Ա բաց
Բագրատունիներուն . որովհետեւ կը
պատմէ Խիրակոս վարդապետ , որ իր
ատեն՝ յամին 1247 Դիմուգ Ուաթա-
րաց մեծ Պ անը՝ Ա բաց թագաւորու-
թիւնը և գանձերը անոնց մէջ բաժնե-
լու և կարգաւորելու ատեն , կը պա-
տուիրէ որ իրեն բերեն “ Օ տախտն
” պատուական և զանգին Ուագին Տրա-
” շալի զոր ոչ ունեին այլ թագաւորքն ,
” զոր Խոսրովու լեալ մեծի հօրն Տր-
” դատայ արքային Հայոց , և անդ մնա-
” ցեալ գաղտականութեամբ վասն ամ-
” ըութեան տեղւոյն , և ’ի թագա-
” ւորսն Ա բաց անկեալ և մնացեալ
” մինչեւ ցայսօր ” :

Ա յսպէս Ա բացակունեաց պաշտպան
մեծին Խոսրովայ թագը՝ իրմէ հազար
տարի վերջը Ուաթար Պ անի մը գլուխ
կամ գանձատուն անցնելու սահմանուեր
է եղեր : Ինկէ վերջն ալ ինչ եղեր է .
զարմանք մ’ալ լսենք՝ որ Յակոբ Ա ա-
լեան պատրիարքը կը յիշէ իր աշխար-
հագրական տեղեկութեանցը մէջ Ծ ի-
րուանայ վրայ խօսած ատեն . “ Խոս-
” ըով հայրն Տրդատայ , զորոյ պատկն
” ասեն լեալ ժառանգեալ կայսերն Ա
” լամանաց „ . Ա աւանդութիւնը կամ
տեղեկութիւնը չենք գիտեր ուսկից ա-
ռած է պատրիարքը :

Ինչ որ ալ եղած է Խոսրովայ թագը՝
մեզի յայտնի կ'երեւնայ որ հոս տեղի
պատկերին թագը անկէ զատ է . Խոս-
րովինը բուն Հայկական թագն էր ինչ-
պէս կը կարծենք , որուն ձեխն վրայ
խօսած ենք Տիգրանայ դրամներուն

վրայ խօսած ատենիս¹ . իսկ այս Տըր-
դատայ թագը բոլորովին նորաձեւ զար-
մանալի թագ է . վրայի ականակապ
խաչերէն յայտնի է՝ որ քրիստոնէու-
թեան ատեն դրած թագն է . ձեւքիչ
մը կը նմանի արև մուեան կայսերաց թա-
գին : Կոստանդիանոս՝ Դաշանց թղթին
մէջ կ'ըսէ . “Պատակեցաք զմեծ աղքայս
” Տըրդատ կայսերական թագիւ մերով,
” լուսատու ակամք յօրինեալ և մեծա-
” մեծ մարդարտով շրջապատեալ . . .
այս թագին վրայ ալ կ'երենան անթիւ
ակունք և մարդարիտք , և մեծամեծ
լուսատու աղամանդք , բայց ասոնք բա-
ւական չենք կրնար սեպել հաստատե-
լու թէ Կոստանդիանոսի տուած թագն
է այս , որովհետեւ Կոստանդիանոսի
պատկերաց վրայ ասոր նման թագ ըլ-
կայ , և ոչ ալ ուրիշ տեղ տեսեր ենք :
” ատ նշանաւոր է թագին բերանը
անկիւնաւոր ձեռվ , և իբր ականջնե-
րով լըմընցած , որ հայկական թագը կը²
յիշեցընէ . բացուածքին լայնքն ալ կը³
ցուցընէ որ Տըրդատայ պէս հսկայակերպ
գլխի մը համար է այս թագս . վրայի
հարստութիւններն ալ անբաւ և անդին
կ'երենան . թագին երեսն ալ անշուշտ
ոսկի թիթեղով պատած պիտի ըլլայ :

” այս կարծ տեղեկութենէս վերջը
նորէն կը յայտնենք փափազնիս հայրե-
նասէր ազգայնոց , որ մեզի անշափ հա-
ճութիւն է , թէ որ ասոր և ասոր նը-
ման բանի մը վրայ հետաքնին տեղե-
կութիւն մը գտնեն և տան . մանա-
ւանդ որոնք որ բնիկ հայրենեաց մէջ
են , և հին եկեղեցեաց պատկերները
և աւանդները կրնան քննել . թերեւս
այն ցանկալի և ստոյգ տեղեկութիւն-
ները բարեխառնեն մեր հառաջանքը ,
որ միշտ կը կանչէ

ՖՈՒՐ ԱՐՏԱՍՈՒԱՑ ԱՉԱՑ ՈՎ ՏԵՑ
ՈՂԲԱԼ Ը. ԹԱԳԻՄ ԱՑՍ ՏՐԴԱՏԱՑ :

1 Հատ . Զ . 277 .

Հ . Դ . Ս

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂ ՋՈՒԹԻՒՆ

” արժման ու հանգստէան հրեռանիւնը և
օգուածները :

ՄԱՐԴՈՒՍ կազմուածքը աղէկ մը
քննելով՝ գրեթէ ամէն երևելի բժիշկք
հաստատեր են , թէ շարժմունքը և եր-
բեմն երբեմն ինչուան նաև ցնցմունքն
ալ ամենահարկաւոր և օգտակար բա-
ներ են մեզի . վասն զի ասոնք են կ'ը-
սեն որ մեր սրտին ու ըղեղին ջղաց
շարժմունքները կը կանոնաւորեն , մաղ-
ձը կը փարատեն , մարմինը ուժով և
տոկուն կը պահէն , և այլն : Բայց որով-
հետեւ տեսակ տեսակ շարժմունք կրնայ
ըլլալ , հոս խօսինք իւրաքանչիւր տեսակ
շարժման առանձին օգուտներուն վրայ :

Ա . Կառագուշ երեւալ : Ի՞ս տեսակ շարժ-
ման օգուտը շատ կախում ունի կառ-
քին շինուածքէն . վասն զի ան տեսակ
կառքերը որ առածգական զսպանակնե-
րու վրայ կը քալեն , կառքին ցնցմունքը
շատ կորսընցընելով՝ գրեթէ խիստ քիչ
օգուտ կ'ընեն մէջի նստողին . ինչպէս
նաև կառքին շուտ կամ անհաւասար
ընթացքն ալ մեծ տարբերութիւն կ'ը-
նէ շարժման կողմանէ . բայց հասարակօ-
րէն ալ կառքին շարժմունքը միշտ քիչ
օգուտ կ'ընէ և ան ալ աւելի տկարնե-
րու , ուրիշ տեսակ շարժմունք ընելու
անկարողներու , ծերերու , կանանց և
նորաբոյժ հիւանդներու . օգուտը աւե-
լի կրնայ ազգել թէ որ մէկը աս տեսակ
շարժմունքով քիչ մը զօրանալէն ետեւ ,
սկսի ուրիշ շարժմունքներ ալ ընելու :
Ուրով ձամբորդութեան զարմանալի
օգուտներն ալ , ինչպէս նաև վազե-
լուն , շուտ շուտ քալելուն և այլն , աս
տեսակ շարժմանց կարգը կը սեպուին :

Բ . Դահի՝ կամ պատգարակէ՝ շարժմունք
Դահի կամ պատգարակի շարժմունք